ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/114

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Բողոքաբեր՝ «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով բաց մրցույթ, ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Լեռնահովիտի, ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի միջնակարգ և ՀՀ Տավուշի մարզի գ. Կիրանցի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 27.10.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ 16.10.2020թ.-ին նիստի թիվ 6-րդ արձանագրությամբ «Արտարս» ՍՊԸ-ին ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 23.10.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 27.10.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/16203-2020 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 27.10.2020թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

28.10.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/114 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 13.11.2020թ.-ին:

2. **«Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ն 27.10.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից վերջինիս կարիքների համար ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Լեռնահովիտի, ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի միջնակարգ և ՀՀ Տավուշի մարզի գ. Կիրանցի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով բաց մրցույթ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3» բաց մրցույթը իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

Վերոհիշյալ ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱՐԳՈՍ» ՍՊԸ-ն և «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ն:

Այնուհետև, «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 16.10.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրությամբ «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ն հրավիրված միաժամանակյա բանակցությունների ընթացքում ներկայացել է գնահատող հանձնաժողովի կողմից հայտարարված գների նվազեցման

միաժամանակյա բանակցությունների ն առաջարկելով ներկայացված գնային առաջարկից ինքնարժեքից ցածր գնային առաջարկ ճանաչվել է ընտրված մասնակից /614.000.000 ՀՀ դրամ/:

Տվյալ պարագայում Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
3	«ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ	562 755 705	61 000 000	124 751 141	748 506 846

Տեղի ունեցած բանակցությունների արդյունքում «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է վերանայված հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
3	«ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ	516 666 667	0	102 333 333	614 000 000

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հրավերի 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինը աշխատանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Տվյալ պարագայում, Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, մասնակցության հայտում «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
3	«ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ	562 755 705	61 000 000	124 751 141	748 506 846

16.10.2020թ.-ին տեղի ունեցած գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների արդյունքում «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
3	«ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ	516 666 667	0	102 333 333	614 000 000

Այսպիսով սույն Ընթացակարգի շրջանակում, «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի բաղադրիչը 3-րդ չափաբաժնի մասով կազմել է 562 755 705 ՀՀ դրամ, սակայն 16.10.2020թ. տեղի ունեցած բանակցությունների արդյունքում «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը նվազեցրել է ոչ միայն նույն գնային առաջարկով ներկայացրած շահույթից, այլ նաև՝ արդեն հստակ

նախատեսված ինքնարժեքից, որի արդյունքում «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի ինքնարժեքը նվազեցվել է և կազմել է 516 666 667 ՀՀ դրամ՝ նախկին 562 755 705 ՀՀ դրամի փոխարեն:

Վերոնշյալով պայմանավորված, գտնում ենք, որ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը չպետք է բավարար գնահատեր «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի ներկայացրած նվազեցված գնային առաջարկը, և առավել ևս չպետք է վերջինիս ճանաչեր ընտրված մասնակից՝ հիմք ընդունելով Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը և Հրավերի 5.1-րդ կետը, քանի որ բանակցությունների ժամանակ մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավունք չունի նվազեցնելու գնային առաջարկով ներկայացված ինքնարժեքի գումարները, իսկ այդ ննազեցված գնային առաջարկը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է գնահատի որպես հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող:

Գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը դրանով իսկ խախտել է Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի և Հրավերի 5.1-րդ կետի պահանջները:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ 16.10.2020թ.-ին նիստի թիվ 6-րդ արձանագրությամբ «Արտարս» ՍՊԸ-ին ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ որոշում:

Ընկերությունը «12.11.2020թ.»-ով թվագրված, սակայն 11.11.2020թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱՐԳՈՍ» ՍՊԸ-ի կողմից 27.10.2020թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/114 ծածկագրով բողոքը, որի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ լրացուցիչ հիմնավորումները.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարաանի կողմից:

Նախ, ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի կատարել սույն ընթացակարգի վերաբերյալ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 02.10.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/100 իրավապարտադիր որոշումը, որով գնահատող հանձնաժողովը պարտավորեցվել է կայացնել որոշում՝ «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

Ավելին, «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի հայտը ոչ միայն չի մերժվել, այլ «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ն նորից հրավիրվել է նոր հրավիրված միաժամանակյա բանակցությունների և ներկայացրել նոր գնային առաջարկ:

Մինչդեռ վերոհիշյալը ուղղակիորեն խախտում է Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, որը հստակ ամրագրում է, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

Սակայն նոր հրավիրված բանակցությունների արդյունքում «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ն նորից առաջարկել է ներկայացված գնային առաջարկի ինքնարժեքից ցածր գնային առաջարկ՝ հայտով ներկայացրած գնային առաջարկի 562 755 705 22 գրամ ինքնարժեքը նվազեցնելով 516 666 667 ՀՀ դրամի:

Մինչդեռ հենց սույն ընթացակարգի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 02.10.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/100 որոշմամբ ուղղակիորեն ամրագրվել է, որ բանակցությունների ընթացքում «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի կողմից իր ներկայացրած գնային առաջարկի ինքնարժեքը նվազեցնելու պարագայում այդ գնային առաջարկը պետք է գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվեր հրավերի պահանջներին չհամապատասխանող և այդ հիմքով մասնակցի հայտը պետք է մերժվեր:

Հարգելի պարոն Օհանյան, խնդրում ենք սույն բողոքով կայացվելիք որոշմամբ անդրադառնալ վերոհիշյալ փաստարկին և իրական գնահատականի արժանացնել Ձեր կողմից 02.10.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/100 իրավապարտադիր որոշման չկատարման փաստը, ինչը ուղղակիորեն առաջացնում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների խախտում և հեղինակազրկում է բողոքներ քննող անձանց որոշումները:

Տեղեկացնում եմ նաև, որ այս մասով, այսինքն թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/100 իրավապարաադիր որոշման չկատարման փաստով «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱՐԳՈՍ» ՍՊԸ-ն դիմել է համապատասխան իրավասու մարմիններին՝ խնդիրը անմիջական վերահսկողության տակ վերցնելու, մեղավոր անձանց բացահայտելու և համապատասխան պատասխանատվության ենթարկելու համար:

2. Ինչ վերաբերվում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/114 ծածկագրով բողոքի վերաբերյալ հայտնած դիրքորոշմանը, ապա հայտնում ենք հետևյալը.

Ուսումնասիրելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի դիրքորոումը, ինչպես նաև ամփոփելով սույն բողոքի լրացման 1-ին կետով մատնանշված փաստերն ու փաստական հանգամանքները, գալիս ենք այն եզրահանգմանը, որ փաստացի գնահատող հանձնաժողովը չի կատարել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 02.10.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/100 իրավապարտադիր որոշումը և ներկայացնում նույն հակափաստարկները, որի վերաբերյալ նույն ընթացակարգով ՀՀ

գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 02.10.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/100 որոշմամբ ուղղակիորեն ամրագրվել է, որ բանակցությունների ընթացքում «ԱՐՏԱՐԱ» ՍՊԸ-ի կողմից իր ներկայացրած գնային առաջարկի ինքնարժեքը նվազեցնելու պարագայում այդ գնային առաջարկը պետք է գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվեր հրավերի պահանջներին չհամապատասխանող և այդ հիմքով մասնակցի հայտը պետք է մերժվեր:

Ավելի, քան կասկածելի է գնահատող հանձնաժողովի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 02.10.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/100 իրավաարտադիր որոշումը ցանկացած գնով չկատարելուն միտված վարքագիծը:

Հույսով ենք, այս վարքագիծը կարժանանա Ձեր իրավական գնահատականին ապահովելով օրենքի գերակայությունը:

Հարգելի պարոն Օհանյան, հաշվի առնելով, որ 27.10.2020թ. «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱՐԳՈՍ» ՍՊԸ-ի կողմից 27.10.2020թ. ներկայացրած բողոքով որոշման հրապարակում է նշանակվել 13.11.2020թ., խնդրում ենք սույն լրացման ներկայացման ամսաթիվը հիմք չընդունել դրան որոշմամբ չանդրադառնալու համար, իսկ անհրաժեշտության դեպքում հետաձգել որոշման հրապարակումը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ևս մեկ անգամ խնդրում ենք «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱՐԳՈՍ» ՍՊԸ-ի կողմից 27.10.2020թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/114 ծածկագրով բողոքը բավարարել:»:

3. **<u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.**

Բողոքներ քննող անձը 28.10.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/16261-2020 գրությամբ դիմել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեին՝ հնարավորություն տալով «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ի կողմից 27.10.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 30.10.2020թ.-ին ներկայացված թիվ 02/16.4/8440-2020 գրությամբ կից ներկայացրել է ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Լեռնահովիտի, ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի միջնակարգ և ՀՀ Տավուշի մարզի գ. Կիրանցի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2020թ.-ի հունիսի 26-ին կազմակերպված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով մրցույթի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը և հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքի մասին հայտարարությունը հրապարակվել, ինչպես նաև Պատվիրատուին ծանուցվել է անգործության ժամկետն ավարտվելուն հաջորդող երկրորդ աշխատանքային օրը: <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում՝ անգործության ժամկետն ավարտվելուն հաջորդող աշխատանքային օրը, Պատվիրատուն ընտրված մասնակցին ներկայացրել է պայմանագիր կնքելու առաջարկ:

Կից ուղարկում եմ ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Լեռնահովիտի, ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի միջնակարգ և ՀՀ Տավուշի մարզի գ. Կիրանցի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից 2020 թվականի հունիսի 26-ին կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ տեղեկացնում եմ.

ա) Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:

Մրցույթի ընթացքում մասնակիցները ներկայացնում են իրենց կողմից հաշվարկված ինքնարժեքներ, որոնք բնականաբար տարբեր են, հաշվարկված են տարբեր մասնագետների, տարբեր տեխնոլոգիաների կիրառման ու տարբեր նյութերի ընտրության արդյունքում և ի սկզբանե չեն համապատասխանում կազմված նախահաշվին: Այս երևույթը բավականաչափ տրամաբանական է ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում և մրցակցային ձևով տվյալ աշխատանքների գնումները կազմակերպելու հանգամանքով պայմանավորված:

Մասնակցի կողմից ներկայացվող գնային առաջարկի հավելվածում <<ընդհանուր գինը>> (կամ որ նույնն է՝ մասնակցի գնային առաջարկը) բաղկացած է <<ինքնարժեք>>, <<շահույթ>> և <<ավելացված արժեքի հարկ>> բաղադրիչների հանրագումարից:

Բողոքաբերը մեջբերում է Օրենքի վերը նշված դրույթը՝ հիմնավորելու, որ մասնակիցները չեն կարող բանակցությունների արդյունքում իրենց գնային առաջարկը (հավելվածում նշված <<ընդհանուր գինը>>) նվազեցնել <<ինքնարժեք>> բաղադրիչը

նվազեցնելու շնորհիվ, մինչդեռ այդ դրույթի գործող ձևակերպման պարագայում հստակ չի սահմանվում, թե ինչ ինքնարժեքի մասին է խոսքը (այսինքն ում կողմից սահմանված և որտեղ նշված ինքնարժեքի), որից չի կարող պակաս լինել մասնակցի գնային առաջարկը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, որի ընթացքում յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն է տրվում ներկայացնելու նոր գնային առաջարկ, որը կարող է էականորեն տարբերվել սկզբնական առաջարկած գնից, ինչը նույնպես բաղկացած է <<ինքնարժեք>>, <<շահույթ>> և <<ավելացված արժեքի հարկ>> նոր բաղադրիչների հանրագումարից:

Օրինակ. մասնակիցը կարող է նախապես հաշվարկված ընդհանուր արժեքի մեջ, կերամոգրանիտի և ՊՎՔ հատակների նյութերի արժեքները հաշվարկել յուրաքանչյուրը 10 000 ՀՀ դրամ և բանակցությունների ընթացքում գնի իջեցման և առավել մրցակցային գին առաջարկելու հանգամանքով պայմանավորված՝ դրանց գները վերահաշվարկել՝ իջեցնելով մինչև 6 000 ՀՀ դրամ ու դրանց յուրաքանչյուրի 1 500 քմ ծավալի առկայության դեպքում, ընդհանուր գնիջեցումը նախապես ներկայացված ինքնարժեքից կկազմի 12 000 000 ՀՀ դրամ: Նշված օրինակները կարող են լինել բազմաթիվ, որոնք էլ հիմնավորում են գործող օրենսդրության և բանակցությունների առկայության պարագայում նոր գնային առաջարկ ներկայացնելիս պայմանական <<ինքնարժեքի>> նվազեցման գործողությունները:

բ) Շինարարական աշխատանքների գնումների դեպքում.

1. Շինարարական աշխատանքների ինքնարժեքը նախահաշվել տեսականորեն անգամ հնարավոր չէ, և այն ձևավորվում է շինարարական աշխատանքների ավարտին՝ հաշվապահական հաշվարկների արդյունքում, փաստացի մուտքերի և ելքերի հանրագումարում, որտեղ չնախատեսված կամ չնախահաշվված ծախսերի չափաբաժինը էականորեն մեծ է այլ տեսակի աշխատանքների համեմատությամբ:

2. Շինարարական աշխատանքների գնման կողմնորոշիչ գին է սահմանվում նախագծի հիման վրա կազմված և քաղաքաշինական փորձաքննություն անցած նախահաշվային արժեքը, որը նախապես հայտնի է պատվիրատուին և որով շինարարական աշխատանքների ամբողջական արժեքը ներկայացված է մի քանի բաղադրիչով: Այն գոյանում է աշխատանքների արժեքներից, աշխատավարձի ֆոնդից,

նյութերի գներից ու դրանց ծախսաչափերից, տրանսպորտային ու պահեստավորման ծախսերից, ինչպես նաև վերադիր ծախսերից ու ամփոփ նախահաշվով սահմանվող այլ կողմնակի ծախսերից, որոնք են կլիմայական պայմանների ազդեցությունը, աղբի մաքրման ծախսերը, ժամանակավոր շենք-շինությունների արժեքները, չնախատեսված ծախսերից, որոնց հանրագումարի վրա ավելանում է նաև ավելացված արժեքի հարկը, իսկ օբյեկտային նախահաշվի վրա ավելանում է նաև շահույթը, որը կազմում է ֆիքսված 11%: Նշված բոլոր ծախսերը սահմանվում են և ընդհանուր առմամբ ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող ծրագրերի համար նախահաշիվը կազմվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշման և պատվիրատուի համար կրում է խորհրդատվական ու կողմնորոշիչ բնույթ: Վերոգրյալի վերլուծության արդյունքում կարելի է ամրագրել, որ բացառությամբ ավելացված արժեքի հարկի, որը պարտադիր ծախս չի համարվում բոլոր տնտեսվարողների համար (որոշ ընկերություններ աշխատում են շրջանառության հարկով), մնացած բոլոր ծախսերը միասին կկազմեն շինարարական օբյեկտի ինքնարժեքը, որում կարող է տպատանվել միայն սահմանված 11% շահույթը և մասնակիցների կողմից գնիջեցումները կարող են լինել միայն սահմանված շահույթից:

Հարկ է նշել, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ գնառաջարկի ներկայացման մեթոդաբանությունը, ինքնարժեքի և շահույթի համամասնությունների սահմանափակումներ չկան և հղումներ տրված չեն նախապես կազմված և փորձաքննություն անցած նախահաշվային համամասնություններին և շահույթի առավելագույն չափին: Նշված հանգամանքով պայմանավորված գնառաջարկները մասնակիցների կողմից ներկայացվում են տարբեր համամասնություններով՝ ընդհուպ մինչև շահույթի կշռի առավել մեծ բաժին քան ինքնարժեքն է և հաշվի առնելով դրանց ներկայացման հանդեպ պահանջների բացակայությունը՝ դրանք մերժման ենթակա չեն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կոմիտեն ևս մեկ անգամ պնդում է, որ <<ԱՐՏԱՐՍ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը գնահատվել է սահմանված կարգով՝ հիմք ընդունելով բանակցությունների արդյունքները, ուստի <<Ինտերեվրոս - Արգոս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ <<Ինտերեվրոս - Արգոս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նույն պահանջով բողոք ներկայացվում է երկրորդ անգամ:»:

4. **ԳԲՔԱ-ԼՕ**-2020/114 **բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Լեռնահովիտի, ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի միջնակարգ և ՀՀ Տավուշի մարզի գ. Կիրանցի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 26.06.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

ii. Մրցույթին մասնակցելու նպատակով 3-րդ չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել նաև «Արտարս» ՍՊԸ-ն և «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ն:

iii. «Արտարս» ՍՊԸ-ն թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկով որպես առաջարկվող ապրանքի ինքնարժեք նշել է 562 755 705 ՀՀ դրամ գումար, ընդհանուր գին՝ 748 506 846 ՀՀ դրամ, իսկ «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ն՝ որպես առաջարկվող ապրանքի ինքնարժեք նշել է 432 210 000 ՀՀ դրամ գումար, ընդհանուր գին՝ 615 012 000 ՀՀ դրամ:

iv. Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 13.10.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով 16.10.2020թ.-ին ժամը 11:00-ին կազմակերպել գների նվազեցման շուրջ կրկնակի բանակցություններ և հրավիրել ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցներին:

v. Հանձնաժողովի 16.10.2020թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով գնման ընթացակարգի գների նվազեցման շուրջ հրավիրված միաժամանակյա բանակցություններին 3-րդ չափաբաժնի ներկայացել են «Արտարս» ՍՊԸ-ն, «ՆիկԴավ Գրուպ» ՍՊԸ-ն և «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ն: Բանակցությունների արդյունքում «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ն և «ՆիկԴավ Գրուպ» ՍՊԸ-ն իրենց գնային առաջարկները թողել է անփոփոխ, իսկ «Արտարս» ՍՊԸ-ի կողմից գնի վերջնական նվազեցումը կազմել է՝ ինքնարժեք-516 666 667 ՀՀ դրամ, շահույթ-0 ՀՀ դրամ, ԱԱՀ-614 000 000 ՀՀ դրամ):

Նույն արձանագրության համաձայն՝ «Արտարս» ՍՊԸ-ն 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

vi. 16.10.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Նույն հայտարարության համաձայն՝ «Արտարս» ՍՊԸ-ի ներկայացրած գինն առանց ԱԱՀ կազմել է 516 666 667 ՀՀ դրամ:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ի կողմից 27.10.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (0.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինն աշխատանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Վերոնշյալ նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանել է գնային առաջարկի ներկայացման համար վավերապայմաններ, որոնցով սահմանվել են, որ այն պետք է բաղկացած լինի ինքնարժեքի, շահույթի և ավելացված արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից և միևնույն ժամանակ ներկայացված գնային առաջարկը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, որի վերաբերյալ տեղեկատվություն է պարունակում նաև հրավերը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Լեռնահովիտի, ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի միջնակարգ և ՀՀ Տավուշի մարզի գ. Կիրանցի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով

26.06.2020թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով 3-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացած «Արտարս» ՍՊԸ-ն թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկով որպես առաջարկվող ապրանքի ինքնարժեք նշել է 562 755 705 ՀՀ դրամ գումար, ընդհանուր գին՝ 748 506 846 ՀՀ դրամ, իսկ «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ն՝ որպես առաջարկվող ապրանքի ինքնարժեք նշել է 432 210 000 ՀՀ դրամ գումար, ընդհանուր գին՝ 615 012 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը որոշել է գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով 16.10.2020թ.-ին ժամը 11:00-ին կազմակերպել գների նվազեցման շուրջ կրկնակի բանակցություններ, որի արդյունքում «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ն և «ՆիկԴավ Գրուպ» ՍՊԸ-ն իենց գնային առաջարկները թողել են անփոփոխ, իսկ «Արտարս» ՍՊԸ-ի կողմից գնի վերջնական նվազեցումը կազմել է՝ ինքնարժեքը՝ 516 666 667 ՀՀ դրամ, շահույթը՝ 0 ՀՀ դրամ, ԱԱՀ-ն՝ 614 000 000 ՀՀ դրամ, ինչի արդյունքում վերջինս 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից: 16.10.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ «Արտարս» ՍՊԸ-ի ներկայացրած գինը՝ առանց ԱԱՀ, կազմել է 516 666 667 ՀՀ դրամ:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Արտարս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի բաղադրիչը կազմել է 562 755 705 ՀՀ դրամ: Սակայն տեղի ունեցած բանակցությունների արդյունքում վերջինս իր ներկայացրած գնային առաջարկը նվազեցրել է ոչ միայն նույն գնային առաջարկով ներկայացրած շահույթից, այլ նաև՝ արդեն հստակ նախատեսված ինքնարժեքից, որի արդյունքում «Արտարս» ՍՊԸ-ի ներկայացրած գինն առանց ԱԱՀ կազմել է 516 666 667 ՀՀ դրամ:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով Մրցույթի գնահատող հանձնաժողովը թույլ տալով Մասնակցին ներկայացնել ինքնարժեքից ցածր գնային առաջարկ, գործել է ոչ իրավաչափ, քանի որ բանակցությունների ժամանակ «Արտարս» ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավունք չունի նվազեցնելու գնային առաջարկով ներկայացված ինքնարժեքի գումարը, իսկ այդ փաստը Հանձնաժողովը բանակցությունների ժամանակ պետք է գնահատի որպես հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող և այդ հիմքով մերժի մասնակցի ներկայացրած հայտը:

Նման պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ խախտվում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը՝ գնման գործընթացի միասնական կանոններով

մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով Ընկերությունների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը, և Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ ցանկացած անձի՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը: Այն դեպքում, երբ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Անդրադառնալով բողոքաբերի կողմից ներկայացված լրացման իրավական և փաստական հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ դրանում վկայակոչված իրավական հիմքերն ու ներկայացված փաստարկները վերաբերելի չեն սույն գործին և չեն կարող էական նշանակություն ունենալ որոշում կայացնելու համար, ինչպես նաև չեն կարող ազդեցություն ունենալ գործի ելքի վրա: 02.10.2020թ.-ին կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/100 որոշմամբ քննարկման առարկա է դարձվել և բողոքարկման հիմք ծառայած հանձնաժողովի կողմից թույլ տրված ոչ իրավաչափ գործողությունները վերաբերել են վերջինիս կողմից 26.08.2020թ.-ին կայացված թիվ 2-5 արձանագրության իրավական և փաստական հանգամանքներին, իսկ սույն գործով քննության է առնվել Հանձնաժողովի կողմից 16.10.2020թ.-ին կայացված թիվ 6 արձանագրությունը, իսկ բողոքարկման հիմք ծառայած գործողությունները վերաբերում են նշված արձանագրության իրավական և փաստական հանգամանքներին:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից դիրքորոշմամբ ներկայացված այն կարծիքին, որ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքի մասին հայտարարությունը հրապարակվել, ինչպես նաև Պատվիրատուին ծանուցվել է անգործության ժամկետն ավարտվելուն հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի.

- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

- 3-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը չի բավարարում սույն հոդվածի պահանջները, ապա բողոքն ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձն այդ մասին գրավոր տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու երկու աշխատանքային օր ժամկետ:

- 9-րդ մասի համաձայն՝ ... բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի (այսուհետ նաև՝ Հրաման) 5-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը չի բավարարում օրենքի 50-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ապա այն ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում Անձն այդ մասին՝ համակարգի, իսկ պետական գաղտնիք պարունակող բողոքի դեպքում նախարարության առաջին բաժնի միջոցով ելքագրվող գրությամբ տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով երկու աշխատանքային օր ժամկետ արձանագրված թերությունները վերացնելու համար: Պետական գաղտնիք չպարունակող բողոքի դեպքում Անձը գրությունն ելքագրվելու օրը դրա բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակն ուղարկում է նաև բողոքում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նախքան պայմանագրի կնքումը

բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները, իսկ եթե բողոք ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է անգործության ժամանակահատվածում: Սակայն եթե ներկայացված բողոքը չի բավարարում Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին, ապա Բողոքներ քննող անձը բողոքն ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու երկու աշխատանքային օր ժամկետ:

Բողոքներ քննող անձը բողոքը (շտկված բողոքը) ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, որի արդյունքում հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը գնման գործընթացն ինքնաբերաբար կասեցվում է:

Սույն դեպքում, «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ի կողմից բողոքը ներկայացվել է 23.10.2020թ.-ին՝ մինչև գնման գործընթացի մասին հայտարարված անգործության ժամանակահատվածի ավարտը, և նույն օրն այն մակագրվել է Բողոքներ քննող անձին:

Բողոքներ քննող անձը, բողոքը ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ 27.10.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/16203-2020 գրությամբ, բողոքը վերադարձրել է, բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը՝ սահմանված ժամկետում՝ 27.10.2020թ.-ին, ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

Բողոքներ քննող անձը, շտկված բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, 28.10.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ:

Այսինքն տվյալ պարագայում, Բողոքներ աննող անձը, ներկայացված բողոքի վերաբերյալ հայտարարությունն անգործության ժամկետն ավարտվելուն հաջորդող երկրորդ աշխատանքային օրը հրապարակվելով www.gnumner.am կայքում, առաջնորդվել է Օրենքի 50-րդ հոդվածով սահմանված պահանջներով:

Բացի այդ, Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ որևէ դրույթ առ այն, որ Բողոքներ քննող անձն Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակելուց բացի, պետք է այդ մասին ծանուցի նաև Պատվիրատուին և/կամ գնահատող հանձնաժողովին: Ավելին, ելնելով Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված

դրույթների տրամաբանությունից, Պատվիրատուն և/կամ գնահատող հանձնաժողովը, ինչպես նաև հանձնաժողովի քարտուղարը պարտավոր են անգործության ժամկետը լրանալուն հաջորդող օրը և/կամ մինչև պայմանագրի կնքումը հետևել պաշտոնական տեղեկագրի՝ www.gnumner.am կայքի բողոքարկման բաժնի ներկայացված բողոքների վերաբերյալ հայտարարություններ ենթաբաժնում առկա հրապարակումներին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով Մրցույթի գնահատող հանձնաժողովը թույլ տալով «Արտարս» ՍՊԸ-ին ներկայացնել ինքնարժեքից ցածր գնային առաջարկ՝ թույլ է տվել Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ, Հրավերի 5.1-րդ և 5.2-րդ կետերի խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ի կողմից 27.10.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/114 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ 16.10.2020թ.-ին նիստի թիվ 6-րդ արձանագրությամբ «Արտարս» ՍՊԸ-ին ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**